

Հուլիս եւ Նոյեմբեր, Պանիս եւ Փարիս եւ կալ լրագրոյ կողմանէ աղքատ են:

Լրագրականնոր գործունէութիւն մը կը տիրէ ի Ցամախատան: Կ. Պոլսի միայն ունի 50 լրագիր՝ տաճիկերէն, գաղղիկերէն, հայերէն, անգլիսերէն եւ յունարէն լեզուս:

Աշխարհ ժառանց ամենամեծը՝ Ասիա, միայն 3000 պարբերական հրատարակութիւն ունի, որոնց մեծ մասը կը հրատարակուին Անգլիական Հնդկաստան եւ ի Ճաբոն: Զինաստանի մամուլը դեռ շատ նախնական վիճակի մէջ է: Պաշտօնական ֆինկֆոն թերթի որը երեք անգամ կը հրատարակուի՝ երեք անգամն ալ զատ զատ գունով թղթի վրայ: Զաբոն Եւրոպայի հետ կը մրցի իւր 2000 լրագրոյն: Զաբոնական լրագիրք վարէն վեր կը կարգացուին:

Ամերիկէի մամուլը շատ ողջալի վիճակի մէջ է: ՅԱւերիկայի հազիւ 200 լրագիր կը հրատարակուի՝ որոնց 30ը յեղիպտոս:

Ամերիկայի մամուլը շատ ծաղկած է: 1804ին ի լոյս տեսաւ Ամերիկայի առաջին Boston News առնուն թերթն ի Պոնթիոն, եւ այսօր Միացեալ-Նաւահայկաց լրագրոյ թիւին է 12,500 որոնց 1000ն առնուն օրեայ: — Հետաքրքրականն այս է որ 120 լրագիր հնդկիներէ կը խամբագրուի:

Հարաւային Ամերիկայի լրագիրներն ալ բազմաթիւ են:

ՅԱւսարալիա կը հրատարակուին 700 լրագիր ի Հոնոլուլու որ մոյրաբարդը եւ Սանտիէ կոչեաց, 8, որոնց 5ը անգլ. լեզուաւ եւ 3ը տեղացի բարբառով:

Եվսէ լրագիրներն իրենց լեզուն կողմանէ բաժնեւն ըլլանք, կ'առնենաք 16,500 անգլիկերէն հրատարակութիւնը, 7800՝ գերմաներէն, 6850՝ գաղղիկերէն եւ 1600՝ սպաներէն:

Անգղիոյ թղթատարողի ինքը յամիմ 1889 — 1890:

Անգլիական թղթատարութեան ընդհանուր պաշտօնէին վերջնա հրատարակած տեղեկագրէն կը քաղուիք հետեւեալը:

Ապրիլ մէկէն (1889) մինչեւ Մայիս 31 (1890) ամբողջ Բրիտանիոյ մէջ՝ թղթատարութեան կողմանէ ջրուած էին.

1888—1889
աւելի

Սփորական նամակ՝ . . .	1,650,100,000 կամ 5-9%
Թղթատարական քարտէս՝	217,100,000 " 7-8%
Կիւրք եւ շրջաբերականք՝	441,900,000 " 1-3%
Լրագիր	159,300,000 " 4-8%
Ծրարք	42,850,000 " 8-2%

Մարգու գլուխ ինկած է.

Նամակ՝	43:5 հատ.
Թղթատարական քարտէս՝	5:7 "
Խաշակապք	16: "
Ծրարք՝	1:1 "

Օտար տէրութեանց եւ դաղմականութեանց առաքուեայն 973,807 ծրարք, անցեալ տարի առաքուած էր 552,055. դրէն ու դաղմականութիւններէն եկած ծրարեւուն թիւն է 352,085, անցեալ տարուին է 37,090 աւելի:

Յառնարարեալ (recommandé) նամակաց թիւն անցեալ տարուին է 356-850 աւելի եղաւ. ընդ ամենն՝ 11,357,935:

Պատուիրագրիկներով՝ (4,448,423) փոխադրուած գրամը 42 միլիոն ողբերկն աւելի էր՝ անցեալ տարուան համամասութեամբ 3 միլիոն ողբերկն աւելի:

Թղթատարութեան ինայութեան արկը դրուած իրաց գինն 1889ին վերջը 62,999,620 սղերկն էր, կամ նախընթաց տարիէն 4,443,226 սղերկն աւելի:


Ընդ ամենն 62,403,399 հեռագիր եկաւ, մինչդեռ նախընթաց տարուան հեռագրաց թիւը 57,765,349 էր. ասկէ կը տեսնուի որ տեղական հեռագիրներն 8-5 առ հարիւր աճած են. օտար երկրէ կեղծերն՝ 8-1 առ հարիւր:

Թղթատարութեան զուտ շահն 1889—90 3,346,087 սղերկն է կամ նախընթաց տարուին է 146,443 սղերկն աւելի:

Պաշտօնէից թիւը 61,054 է (անցեալ տարուին է 2658 հազի աւելի). ասանց 4348 կին է: Այս կարգաւոր պաշտօններէ զատ 52,000 (որոնց 15,700ը կին է) հազի ալ կ'ընդ որ իբր ոչ-կարգաւոր պաշտօնայ թղթատարութեան մէջ ծառայութիւն կ'ընեն:

Զմիռնիոյ վաճառքադարձ:

Զմիռնիոյ վաճառականութիւնն եւ հետեւաբար նաեւ քաղաքն մեծապէս կը յառաջագրիմ: Քաղաքին բնակիչքն են այժմ իբր 210,000 հոգի. ասոր դրեմէ կէսը (107,000) յոյն է, մէկ քաղաքը (52,000) մահմետական, իննբարդ մասը (23,000) հրեայ են. մնացեալք են Հայք (12,000), Իտալացիք (6,500), Գաղղիացիք (2,500), Աւստրիացիք (2,200), Անգլիացիք (եւ ի մանաւորի Մալթացիք, 1,500) եւն: Թէեւ նաւահանգիստն առաջիկ ըլլայ, սակայն միշտ շատ լաւ նաւահանգիստ է, մանաւանդ համառուօր ծովափունքը շինուելէն ի վեր: Զմիռնիոյ արտածութիւնն 1889ին եղաւ 91 միլիոն մարք, ներածութիւնն 65 միլիոն:



ՔԱՂԱՔԱՂԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Վիեննա, 28 Փետրուար 1891:

Ամուլոյ մէջ քաղաքական նշանաւոր դէպքն է Եւրոպայի նամար Իտալիոյ Էրիսփի պաշտօնէից զանքեցուն անկումը, որ երկրին դրամական ոյժերը սպառած էր իւր քաղաքականութեամբ: Էրիսփի տեղ Ռուտինի մարգիսն եղաւ զանքեց, եւ իւր կազմած պաշտօնարանը

որոշած է իբր 30 միլիոն ֆրանքի խնայու-
թիւն ընել սպառազինման ծախուոց մէջ,
եւ ըստ կարելւոյն առեւտրական լաւ յա-
րաբերութիւնները նորոգել Գաղղիոյ հետ:

Նաեւ Աւստրիոյ պաշտօնարանը փոփոխութիւն կրեց՝ Տունայեւոսի եւեմոնից պաշտօնէին հրաժարմամբ, որուն տեղ յաջորդեց Շէթանյալս: Աւստրիոյ եւ Ռուսիոյ արքունի գերդաստանաց աւելի սերտ բարեկամութեան նշան առնուեցաւ Փերդինանդոս արքիդքսին Փէթերսպուրկի արքունեաց ըրած ջազմօրեայ այցելութիւնն եւ գաած շքեղ ընդունելութիւնը: Պաշտօնարանի փոփոխութիւն ունեցաւ նաեւ Սերպիա. նոյնպէս Ռումանիոյ պաշտօնարանն իւր հրաժարականը տուաւ: Սպանիոյ մէջ ընտրութիւնք եղան, որոնք նպաստատուր ելք ունեցան ի նպաստ պահպանողական արդի վարչութեան, որուն կողմնակիցք մեծ առաւելութեամբ ընտրուեցան:

Փորթուկալի համար մեծ վտանգ մըն էր Օփորթոյի մէջ հասարակապետականացման շարուցած ապստամբութիւնը, որուն տարածուելուն մեծ երկիրը կար: Բարեբախտաբար կառավարութեան հաստատարիմ՝ գնդերը շուտով զգացցին խռովութիւնը: Ընդհակառակն դիւրաւ չվերջացաւ շիրիի խռովութիւնը, որ շատ արիւնշահեղ կերպարանք առաւ, այլեւայլ ընդհարումներ ունեցան ապստամբը եւ կառավարութեան գնդերը, մինչեւ մօտ օրերս ապստամբեալ տորմոլը զիջիքէ մեծ անկողով ունեակոծեց եւ առաւ. ասոր վրայ Անգղիոյ միջամտութեամբ՝ առօրեայ դոյզն զինատաղար կըրտնցաւ:

Ամոնյա մէջ եզիպատոսի կառավարութիւնը պատշաճ տեսաւ արշավանք մ'ընել ընդդէմ խռովային Արաքսը, եւ արիւնալից ճակատով մի ցրուեց խօնալի տնիս իբր 5000 հոգի հաշուով քանակել, եւ առաւ զԹորքը: Եզիպատական Դատական նոր տրամադրութիւն մի, որ Անգիոյ աւելի նպաստտուող էր, այլքար մէ յարդը Գաղղիոյ եւ Անգիոյ մէջ, բայց կր յուսա-

ցուի որ յաջողութեամբ յաղթուի դժուարութիւնը:

Նոր ջանքեր եղան Գերմանիոյ եւ Գաղղիոյ յարաբերութիւններն աւելի բարւոյնելու, եւ կը յուսացուէր որ ի Պերլին թաղարեւի զեղարուեստից աշխարհահանդէսին մասնակցին ըստմութեամբ նաեւ Գաղղիոյ արուեստագէտը: Լյուլյոյը կը զօրանար նաեւ այնու որ կայարանին Փրեդերիկ ի սկզբան լաւ ընդունելութիւն գտաւ ի Բարիզ: Բայց այս քոյրը յայտնին ի դերքեւ երաժ կ'երեւան Ճեմուէտի եւ ընկերաց վերջնիս յարուցած տարապայման աղմուկը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՄՆԵՑԿԱՆ

ՄԱՏԵՆԱԳԱԿԱՆ — Ստոյն-Կալիսթենեայ (Pseudo-
Callisthenes) վաղուց Ադեքսանդրի ուսումնաստի-
րութիւնը, 65:

68: — “Նոր հայագիտին”, երկրորդը երկասիրտութիւնը, 70:

ԳՐԱԿԱՆ — Հայերէն ծեռագիրք Վիեննայի կայսերական գրատան, 72:

ՏԻԾ.ԶԵՐԱԳՐԱԿԱՆ — Գաղտնիք երկնից. 79:

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆՆ — Գրաբարի հոլովումը. 81: —
նոր Աշխարհագրութիւն. 83:

ԲԱՆԱՍՏԵՂԺԱԿԱՆ — Գաղթնան օրերը. 84: (Պատկերաւ:)

ԱՌՈՂՋԱԲԱՆԱԿԱՆ — Գլան ծխել. 85:

ՀՈԳԵԹԱՆԱԿԱՆ — Ինտիմությունը երազի. 85:

ԱՐՈՒԷՍՏ ԳԻՏԱ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ — Էջմիածնի աւետարանը և
հայկական գեղարուեստը. 87:

ԲԱՐՈՑԱԿԱՆ

ՄԱՅԻՍԻ ՏԱՄՆՈՒՂԵՑԸ. Պատմական լեւ. 89:

USL 71 USL 72

ՆՈՐԱԼՈՒՐԶ — Մորթոյ այրածքի նոր դարման մը.
93: — Հեռաձայն Փարիզէ ի Լոնտոն. 93:

ՏՆՏԵՍԱԿԱՆ — Տղոց շաքար մի տաք. 93: —
 Ժերած կարագը թափմ հսկելու կերպ. 94: —

Ապահկոյ Շնարակ. 94: — Թաքով՝ հացին վնասա-
կարուծիւնը. 94: — Գլխացաւ ուսանողաց. 94:

ՄԱՆՐԱԼՈՒԲ — Ո՛րչափ քաղիք կայ աշխարհքիս
վրայ, 94: — Մարտիկ: Բրթատարութիւնը ասին

1889—1890. 95: — Զմիւռնիա վաճառաքաղացն.
95:
ԳԱՂԱԳՆԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ 95:

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽՄԲԱԳԻՐ

3. ԲԱՓԱՅԷԼ 4. ԴԱԲԱՆՉ

ԱՒԵՆՆԱ. ԻԽԻԹԱՐԵԱՆ ՑԱՍՐԱՆ